Տեղական հարկերի (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ) հավաքագրում

2021 թվականի հունվարի 8-ից գործարկվեց Համայնքների եկամուտների կառավարման https://e-community.am համակարգը, որը ներկա դրությամբ իր գործառնական հնարավորություններով գրեթե ամբողջությամբ ավտոմատացրել է անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման և հավաքագրման գործընթացը:

Ներդրված համակարգը լիարժեք փոխգործելիություն ունի Կադաստրի կոմիտեի, Ճանապարհային ոստիկանության, գանձապետարանի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, բնակչության ռեգիստրի, բանկերի և վճարային համակարգերի էլեկտրոնային բազաների հետ, ինչը ՏԻՄ-երին, որպես տեղական հարկերի հավաքագրող մարմիններ, թույլ է տալիս առցանց ռեժիմով ծանոթանալ իրենց համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող շարժական և անշարժ գույքին վերաբերող՝ մշտապես արդիական տեղեկատվությանը և առավել արդյունավետ իրականացնել հարկերի հավաքագրումը:

Տեղական հարկերի վճարման գործընթացի հեշտացման նպատակով՝ 2021 թվականի ապրիլից գործարկվեց https://pay.e-community.am/am/ հարթակը, որը նախատեսված է տեղական հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Հարթակի միջոցով վերջիններս կարող են առցանց՝ էլեկտրոնային եղանակով, առանց համայնքապետարան կամ բանկ այցելելու, սմարթֆոնով կամ համակարգչով, ինչպես նաև վճարային տերմինալի միջոցով կատարել իրենց պատկանող շարժական կամ անշարժ գույքի դիմաց ունեցած հարկային պարտավորությունները:

Վերոնշյալի հետ մեկտեղ եթե հաշվի առնենք կանխիկի շրջանառության սահմանափակմանը միտված՝ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական պահանջները, կարող ենք պնդել, որ տեղական հարկերի հաշվարկման և հավաքագրման գործընթացները գրեթե ամբողջությամբ ավտոմատացված են և հարկ վճարող քաղաքացիներն այլևս պարտավորված չեն ոչ միայն հարկերի վճարման, այլ նաև անշարժ գույքի և փոխադրամիջոցների հետ կապված գործարքների դեպքում, վճարումներ կատարելու նպատակով բանկ կամ համայնքապետարան այցելելու, կամ այսպես կոչված զրոյական տեղեկանք ներկայացնելու անհրաժեշտությունից: